ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«_____» _____ 2026թ. **N_____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 3–րդ հոդվածի 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի 9-րդ և 12-րդ մասերով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 20.1 կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշումը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Ոսկերիչների փողոցի հ.1 հասցեին կից գտնվող 900.0քմ մակերեսով հողամասի /ծածկագիր՝ 01-006-0720-0001/ նպատակային նշանակությունը բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Ոսկերիչների փողոցի հ.1 հասցեին կից գտնվող 900.0քմ մակերեսով հողամասի /ծածկագիր՝ 01-006-0720-0001/ նպատակային նշանակությունը բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա:

Համաձայն Երևան քաղաքի ավագանու 10.09.2024թ. հ.204-Ն որոշումով հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի՝ քննարկվող հողամասը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողերի կառուցապատման գոտում է:

Կառուցապատող «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության կողմից Հայաստանի Հանրապետությունում ՄԱԿ-ի COP17 համաժողովի անցկացման շրջանակներում ներդրումային ծրագրով, Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված և համաձայնեցված քաղաքաշինական փաստաթղթերի հիման վրա քննարկվող հողամասում նախատեսվում է իրականացնել տրանսֆորմատորային ենթակայանի կառուցապատման աշխատանքներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տրանսֆորմատորային ենթակայանները հանդիսանում են էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության հողերի օբյեկտներ, ապա անհրաժեշտություն է առաջացել հողամասի նպատակային նշանակությունը համապատասխանեցնել օգտագործման նպատակին:

Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը հավանության է արժանացել ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի հ.1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ մասերի՝ համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը և դրանց նախագծման առաջադրանքները համայնքի ղեկավարի ներկայացմամբ քննարկվում են միջգերատեսչական հանձնաժողովի նիստում և հաստատվում են համայնքի ավագանու կողմից՝ միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ